

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ ՄԱՅՐ ԱՌ-ՈՌ-ՈՒՄ

2004 թ. Հունվարի 6:

Միածնական և Միածնահիմն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կրկին հնչեց Հսուս Քրիստոսի հրաշակառ Ծննդյան ավելիքին ու գարածվեց հնամենի բաճարի խնկարոյր կամարների ներք:

- Քրիստոս Ծնաւ և Յայրնեցաւ,
- Մեզ, ձեզ մեծ աւելիքիս:

Դեռ նախորդ օրը, հունվարի 5-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ճրազալույցի արարողությամբ բազմաթիվ հավաբացյալներ հաղորդակից դարձան Ս. Ծննդյան ավելիքին: Ու ինչպես այդ օրվա խորհուրդն է մենապում Ս. Գրիգոր Տաթևացին՝ «... այսօր նախօրնեն և նախարունակն է վաղվա՛ մեծ Լուսի ծագման: Եվ ինչպես որ թագավորի գալստյանը նրան սփրողները նախ այդ ավելիքից են ուրախանում, պատրաստություն գենսում ու ջահերով ընդառաջ զնում, այնպես էլ մենք նախապես այս երեկո կարարում ենք Քրիստոսի Ծննդյան և Հայունության նախաբոնակ ճրազալույցը»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսանիստ Մայր Տաճարում ճրազալույցի Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ Վրդ. Խաչագրյանը: Երեկոյան Ս. Պատարագից հետո Մայր Տաճարի գոնականորեն գարդարված բակը ողողվեց նորանոր լույսերով. հարյուրավոր հավաբացյալներ վերադարձան սեփական հարկեր՝ իրենց հետ դրանելով Մայր Տաճարի մշկավառ կանթելից վառված մոմեր:

Հունվարի 6-ի առավորյան 1700-ամյա Տաճարի զանգերն ազդարաթեցին Հսուս Քրիստոսի ծննդյան 2004 թ. Ս. Պատարագի սկիզբը: Հայրապետական հանդիսավոր թափորը Վեհարանից առաջնորդվեց դեպի Մայր Տաճար: Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց Հայրապետական Ս. Պատարագ:

Պատարագի ընթացքում Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որպես բնարան ունենալով «Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ» ավելիքանական խոսքը, հայրապետական իր պարզամք, հավաքի ու սիրո մատթանքն ուղղեց համայն հայ ժողովրդին: Ամենայն Հայոց Հայրապետը փառք և զոհություն առաքեց առ Աստված՝ Հայրենիքի խաղաղության, վերարթնացող հավաքքի, Հայրենիք-Սփյուռք միասնության համար, միաժամանակ հայցելով Ասքծո «ամենաառափ խնամքը և խաղաղարար ներկայությունն այնքեղ, որ այսօր պատերազմ է, ավեր, ցավ ու դագնապ»:

«Պատասխանագործություն ենք ժամանակի համար, և մեր գործերով է, որ այն պիտի արձանագրվի իրու վերականգնություն ժամանակաշրջան՝ ազադ կյանքի վերականգնություն, ազագի հոգու և մրածողության, քրիստոնեական մեր նկարագրի վերականգնություն: Մեր նոր ձևորբերություններով ու հայշանակներով է, որ պիտի առաջ ընթանա ժամանակը Հայրենիքի վերաշնուրյան, ժամանակը՝ մեր գաղղօջախներում ազգային կյանքի վերագրթոնքի, մեր մշակույթի, գիտության ու կրթության զարգացման ու ծաղկունքի: Քրիստոս է մեր ճանապարհը, Քրիստոս է մեր գործությունը և ապավինությունը: Այսօր մեզ Փրկիչ է ծնվել, ծնվել է մեզ հույս և սեր: Այս է մեր հավաքը: Այս է ճշմարգությունը՝ մնայուն ու հավիքները»:

նական»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը՝ Փրկչի Սուրբ Ծննդյան բարի ավելիանով Հայրապետական իր օրինությունը բերելով հավաքափոր ժողովորդին:

Հավաքով Ս. Պատարագի, ըստ ավանդույթի, իբրև խորհրդանշի Հորդանան գերուս Քրիստոսի մկրտության, Հայոց Հայրապետը կապարեց Զրորիների արարողություն: Վեհափառ Հայրապետն օրինեց ջուրը Ավելարանով ու Ս. Խաչով՝ հեղեղով Սրբալոյ Մյուռնը: Այս Ս. Խաչը, որ խորհրդանշին է Բայտու Քրիստոսի, իշեցվեց ջուրը: Խաչի այս դարձավ կենքահայրն եր Հայաստանի Հանրապետության արքաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը: Արարողությունից հետո օրինված ջուրը բաժանվեց հավաքացյալ ժողովորդին:

Ս. Պատարագին և Զրորիների արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը, պետական պաշտոնաբար անձինք, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավաքարմագրված օպարեր կըրյա դիվանագետներ, բազմաթիվ հավաքացյալներ:

Սրբազն Պատարագից հետո Վեհարանում գեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

Այս դարի և Ս. Պատարագի և Զրորիների ողջ արարողությունը ուղիղ եթերով հեռարձակվեց Հայաստանի Հանրապետության Ազգային հեռուստաբեռնությամբ, որի ընթացքում հեռուստադիրող հավաքացյալը հնարավորություն ունեցավ նաև ունկնդրելու Տ. Վահրամ քահանա Մելիքյանի մեկնարանություն-բացարձությունները Ծննդյան Ս. Պատարագի և օրվա խորհրդի մասին:

ՃԵՂԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ